



BARRY



KAREN



GARO



514

333-3000

DEMANDEZ UNE ÉVALUATION GRATUITE

Home > Top Stories

«ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» . Հարցազրույց յօրինող Պետրոս Շուժուհեանի Հետ

February 28, 2019

□ 885 □ 0



«ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՀԱՆԴԵՍԻՆ ԱՌԻԹՈՎ

Հարցազրույց Տաղանդաւոր Երաժիշտ-յօրինող Պետրոս Շուժուհեանի Հետ

ՀՈՐԻԶՈՆ.- Այս տարին 150-ամեակն է Կոմիտասի ծննդեան: Եւ Չորեքշաբթի, 27 Մարտին Համար ծանուցուած է Orchestre symphonique de Laval-ի և Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդարանին Համագործակցութեամբ Համերգային Հանդէս մը (concert), որ նուիրուած է Կոմիտասի: Նուագախումբի տարեկան յայտագրի ծանուցման մէջ, շատ նշանակալից է առիթին Հայտած անուանումը «Սփիրիթիւէ Արմէնի», ինչ որ կը թելադրէ, թէ օրուայ յայտագրին առաջին երկու արևմտեան ստեղծագործութիւնները (Brahms – Ouverture tragique, op 81, և Ravel – Le tombeau de Couperin) Կոմիտասի յիշատակին կը հային: Սիրելի պրն. Շուժուհեան, այս ստեղծագործութիւններու ընտրութեան մասին կը փափաքինք որ ձեր մեկնաբանութիւնը տաք:

ՊԵՏՐՈՍ ՇՈՒԺՈՒՆԵԱՆ.- Պրամսի ստեղծագործութիւնը զուտ երաժշտութիւն մըն է: Անիկա երեք բաժիններով զարգացուած է: Հիմքին կը գտնուի գաղափարը իւրաքանչիւր նուագարանին Հերթաբար տալ մենակատարային պաշտօն: Յօրինումը անշուշտ այնպիսին է, որ մենակատարուները կատարելապէս ներդաշնակ միաձուլմամբ մը բռնուած են: Կառուցուած, բարդացուած երաժշտութիւն մըն է, որուն հորիզոնին կ'ընդնշմարուի պայծառ լոյսը:

Ռավելի ստեղծագործութեան անունին թարգմանութիւնը դիրին է, բայց չ'արտատայտեր անոր բուն իմաստը: «Tombeau» անունը ֆրանսական ասանդոթի մէջ եզր մըն է, որ կը նշանակէ յօրինուածք կամ շարք յօրինուածքներու, որոնք ձօնուած են մահուամբ հեռացած վարպետի, կամ ընկերոջ կամ ընկերներու: Անիկա ձօն եղբարևուագ մըն է:

Կուպրենն ալ՝ Քրանսայի ստեղնաշարային երաժշտութեան Հիմնադիրներէն է: Անոր ստեղծագործութիւնները շինչ և նուրբ են:

Ռավել Համաշխարհային Առաջին Պատերազմին մասնակցած զինուոր էր: Այն ատեն իր զինակիցներէն շատ շատեր զոհուած էին: Ի յիշատակ անոնց է, որ ան Կուպրենի ոճով այս եղբարևուագը յօրինած էր:

Ուրեմն, Պրամսի և Ռավելի ստեղծագործութիւնները այս առիթին Համար ամենապատշաճ ստեղծագործութիւններ են, և ըստ յայտագրի նշանակութեան կը պատմեն Կոմիտասեան ասանդին քանի մը սկզբունքները. Հայ երաժշտութեան իւրաքանչիւր տարրի ուրոյն նկարագրին և արժէքին ճանաչում, իւրաքանչիւրի վերաբերում, ընդհանուրի ներդաշնակութիւն որովհետև Հիմք մը առկայ է, որ անոնց Հասարակաց նկարագիրը կու տայ: Նաև թէ՛ Կոմիտասի ասանդը ամուր Հաստատութիւնն է ստեղծագործ Հայ նոր երաժշտութեան:

Հ.- Նոյն ծանուցումէն կը տեղեկանանք, թէ յայտագրին երկրորդ և երրորդ ստեղծագործութիւնները Կոմիտասէ են: Կոմիտաս պատեհութիւնը չէ ունեցած նուագախմբային ծրագրով յօրինելու, և անա՛ շնորհիւ Ձեզի՛ երկու կտաններ բարձրացուած են նուագախմբային մակարդակի ու ծաւալի: Առաջին կտաւը, ինչպէս Ձեր հետ խօսակցութենէ տեղեկանանք, Կոմիտասի 7 պարեղանակներուն նուագախմբայնացումն է, իսկ երկրորդ՝ Կոմիտասի Պատարագին: Կը խնդրենք, որ թէ՛ պարեղանակներուն, և թէ՛ Պատարագին հետ Ձեր մարտահրաւէրներուն և կատարածին վրայ բացատրութիւններ տաք:

ՊՇ.- Նախ երկու խօսքով պիտի բացատրեմ, թէ ինձի Համար ո՞վ է Կոմիտաս: Կոմիտասի հետ իմ բարեկամութիւնը, եթէ կարելի է ըսել, սկսած է շատ վաղուց, երբ առաջին անգամ ջութակով սկսայ նուագել իր Կոունկը: Աշակերտական այն փորձէն իսկ անբացատրելի կապ ստեղծուեցաւ իր և իմ միջև: Եւ երբ փոխադրուելով Հաստատուեցայ Մոնթրէալ, ու երաժշտութիւնը ընտրեցի որպէս մասնագիտութեան ասպարէզ, և ապա ղեկավարեցի երգչախումբեր՝ Կոմիտասի ասանդը միշտ հետս եղաւ, թէ՛ որպէս ամենօրեայ ներշնչարան և թէ՛ որպէս Հարստութիւն կենսական էր տարածել: 1984-ին ալ, առաջին անգամ ըլլալով իր երգերուն հետ ունեցայ մշակողական փորձառութիւնս, երբ լարային նուագախմբի Համար մշակեցի իր դաշնամուրային ընկերակցութեամբ երգերէն փունջ մը: Մշակումս կարելի էր որովհետև Կոմիտաս ինք արդէն շատ լաւ պատկերացուցած էր նոյնիսկ լարային նուագախումբով կատարման հորիզոնը:

Կոմիտաս ինձի Համար այն գլխագիր Հայն է, որ կամուրջ հանդիսացաւ մեր անցեալին ու ներկային միջև: Ձեմ կրնար պատկերացնել այն աղէտակի վիճակը, որուն մէջ պիտի ըլլայինք՝ եթէ ան իր առաքելութիւնը կատարած չըլլար...

Գալով Ձեր Հարցումին, ըլլալով գանատահայ (նախկին Կիւմրեցի) երաժիշտ-յօրինող, ինձի Համար Կոմիտասի ծննդեան 150-րդ ՅՈՒՐԵՆԻՆԱԿԱՆ կարելի չէր անյիշատակելի ձգել:

Որոշեցի անոր դաշնամուրային գործերէն եօթ պարեղանակները վերածել դաշնամուրով Համանուագի, սկզբունք ունենալով դաշնամուրային բաժինը անփոփոխ պահել, և նուագախմբային բաժինը մշակել Համաձայն անոր բնդրանակներուն: Համանուագը մշակեցի չորս բաժիններով: Արդիւնքը եղաւ այն, որ Հիմա ունինք դաշնամուրի և նուագախումբի երկխօսութեամբ Համանուագ մը: Անկասկած, եթէ Կոմիտաս առիթ ունեցած ըլլար և իր տրամադրութեան տակ ունենար մեծ նուագախումբ մը, տարածուն և հիանալի գործեր ալ պիտի կտակէր:

Երկրորդ գործին առնչութեամբ, Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ հովիւին Տ. Գառնիկի առաջարկած ցանկը քսան վայրկեաննոց Համանուագի մը վերածեցի: Կոմիտասի յօրինումները այս պարագային ալ կ'ընծայէին լայն կարելիութիւններ նուագախմբային մակարդակով մատուցուելու: Թէ՛ պարեղանակներուն և թէ՛ Պատարագին վրայ աշխատանքս՝ հիացումէ հիացում անցումներու փորձառութիւն մըն էր:

Հ.- Ակնարկեցիք Տ. Գառնիկին: Գիտենք, որ տէր Հօր հետ Ձեր գործակցութիւնը ուշագրաւ յաջողութիւններ արձանագրած է: Ուստի, կը փափաքինք, որ իրեն հետ Ձեր գործակցութեան անդրադառնաք:

ՊՇ.- Նախ, ինչպէս սկիզբը ակնարկեցիք, 27 Մարտի ձեռնարկը կը վալելէ Համագործակցութիւնը Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդարանին և Orchestre symphonique de Laval-ի, որուն Համար շատ շնորհակալ եմ կրկնակիօրէն. առաջնահերթաբար՝ Կոմիտասի անուան Համար, և երկրորդ՝ ընծայուած առիթին Համար, որ մշակածներս պիտի հրամցուին:

Իսկ Տ. Գառնիկ այն քիչ հոգևորականներէն է, որոնք կը հաւատան մշակոյթի ուժին: Ան ցարդ իրագործած է անկարելին:

Անիկա իմ և Տ. Գառնիկի առաջին նախածնունդներէն չէ: Մենք գործակցելու սկսած ենք 2009-ին, երբ կը տօնուէր իր ծառայած եկեղեցւոյ՝ Ս. Յակոբ Առաջ. Մայր եկեղեցւոյ 50-ամեակը, երբ Ս. Յակոբի շարականը մշակեցի ձայնի և լարային եռեակի Համար, և կատարումը խմբավարեցի: Յետոյ 2010-ին՝ Կոմիտասի ծննդեան 140-ամեակի Համերգը, երբ Վիվա Վօչէն խմբավարութեամբ Պրն. Փիթըր Շուպերթի Կոմիտասի հոգևոր երաժշտութենէն փունջ մեր երգեց, նաև երգեց առիթին նուիրուած «Անբաժանելի» և «Այսօր դասք» շարականներուն երգչախմբային և նուագախմբային իմ յօրինումները: 2014-ին՝ «Նանօրի Ուխտը» երգաքերթուածը, որ մշակած էի մանկապատանեկան երգչախումբի և նուագախումբի Համար _ աս ալ ըսեմ, որ երգաքերթուածը Բարսեղ Կանաչեանի «Նանօր»ին վերախմբագրուած է և ծաւալումը _ Անիկա երգուեցաւ Ս. Յակոբ եկեղեցւոյ «Նոր Ծաղիկ» երգչախումբին կողմէ խմբավարութեամբ Տիկ. Էլօ Հարպոյեանի: Եւ 2015-ին՝ անմոռանալի Պատարագ և Հոգեհանգիստը, որ նուիրուած էր Հայոց ծեղասպանութեան զոհերուն, և երգուեցաւ Սէն Լօրան երգչախումբին կողմէ, խմբավարութեամբ Պրն. Ֆիլիպ Պուրգի, և երգեհոնահարութեամբ Պրն. Ֆիլիպ Գրոգիէի:

Հ.- Գանատայի կը գտնենք, որ Կոմիտասեան Պատարագին նուագախմբայնացումը ձօնած էք Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդին Գերշ. Տ. Բարգէն Արքեպիսկոպոսի Քահանայական Օծման 35-ամեակին: Նաև՝ շնորհակալ ենք Ձեր այս Հարցազրույցին Համար: Այս առիթով, մեր ընթերցողներուն կը յայտնենք, թէ Կոմիտասեան Պատարագին Orchestre symphonique de Laval-ի կողմէ մեկնաբանութեան հովանաւորներն են Ս. Յակոբ Առաջ. Մայր եկեղեցւոյ բարերարներէն՝ Տիկ. Շաքէ Կէօնեան, Պրն. Մանուկ Չուխաճեան, Տ. և Տիկ. Աւօ և Մարալ Թաշճեան և Բաստրմաճեան Հիմնադրամը: Կրնայի՞նք խնդրել, որ այս Հարցազրույցը փակուի Ձեր խօսքով:

ՊՇ.- Շնորհակալ եմ: Հետեւելով գաղութային կենսաքին, նշմարած եմ, որ Բարգէն Սրբազան աշխուժօրէն կը ծառայէ, և նեցուկ է գանազան ծրագիրներու յաջողութեան: Երբ ինձի առաջարկուեցաւ Կոմիտասի Պատարագին նուագախմբային մշակումը ձօնել անոր Քահանայական Օծման 35-ամեակին սիրայօժար ընդառաջեցի: Կը մղթեմ, որ սրբազանին առաքելութիւնը միշտ յաջողութիւններ ունենայ: Յիշեցիք մեր գաղութի նուիրատուներէն խմբակի մը անունը: Պարտք կը գգամ թէ՛ անոնց, և թէ՛ նախորդ առիթներուն սատարած նուիրատուներուն և քաջալերող ժողովուրդին շնորհակալութիւն յայտնել: Քանի և առանց բողոքին նիւթական զոհողութիւններուն անկարելի է մեր ժառանգութեան արագիւրներ օրնենալ և իրականացնել զանոնք: Վերջ ի վերջոյ, մեզ պիտի արժևորեն մեր ստեղծագործ արժէքներուն Համար, և Համաձայն:

Komitas.ca
FUNERAL COMPLEX
Always standing by our community
PRE-PLANNING WITH 0% INTEREST
1, 3, 5 OR 10 YEAR PAYMENT PLANS
5180 Salaberry, Montreal, QC H4J 1J3
T 514.331.0400

Հորիզոն
horizon | MÉDIADARÈ ARMÈNIEN - Supplément en français | ARMENIAN WEEK
Read 122 other friends like this!??

HONDA
Certified
Used Vehicles
CLICK TO VIEW OUR INVENTORY
HONDA GABRIEL
ANJOU

Get Horizon Weekly on your smartphone

PARK HOTEL
ARTSAKH